ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, բնության այն առարկաների ու երևույթների ամբողջությունը (հողը, ջուրը, բուսական ու կենդանական աշխարհը, երկրի ընդերքի հարստությունները, էներգիայի աղբյուրները, մթնոլորտի ստորին շերտը, կլիման), որոնք անմիջականորեն կապված են մարդկային կյանքի հետ, մասնավորապես ներառված են հասարակական արտադրության ոլորտի մեջ՝ կազմելով հասարակության գոյության ու զարգացման բնական անհրաժեշտ հիմքը: Պատմական զարգացման զուգընթաց Ա. մ-ի շրջանակներն ընդլայնվում են, բնության նորանոր մասեր ու երևույթներ են ներգրավվում հասարակական կյանքի մեջ: *Աշխարհագրական ուղղության* ներկայացուցիչները գերագնահատում են Ա. մ-ի դերը, այն համարում հասարակական զարգացման վճռական գործոն: Մարքսիզմը, մերժելով այդ տեսակետը, միաժամանակ ընդունում է Ա. մ-ի որոշակի դերը հասարակության կյանքում: Ա. մ., լինելով բարենպաստ կամ անբարենպաստ արտադրողական ուժերի, արտադրության առանձին ճյուղերի զար-

գացման համար, դրանով իսկ արագացնում կամ դանդաղեցնում է հասարակական զարգացման ընթացքը: Ընդ որում, Ա. մ-ի այդ ազդեցությունը միշտ էլ միջնորդավորվում է հասարակական հարաբերություններով և պատմականորեն փոփոխվում է: Հասարակությունը, ավելի ու ավելի լայնորեն օգտագործելով բնության ուժերը, հետզհետե դուրս է գալիս բնությանն ստրկացված լինելու վիճակից: Հասարակական կյանքում գնալով ավելի մեծ դեր է սկսում խաղալ Ա. մ-ի այն մասը, որն անմիջական հիմք է ծառայում աշխատանքի միջոցների ստեղծման համար (օգտակար հանածոները, էներգիայի աղբյուրները), քան այն մասը, որն անմիջական հիմք է ծառայում կենսամթերքների արտադրության համար (բուսական և կենդանական աշխարհը, բերրի հողը): Ա. մ. ինքը ևս փոփոխություններ է կրում (թեև դանդաղ) թե՛ հասարակության ազդեցությամբ և թե՛ նրանից անկախ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՑԻԿԼ, գեոմորֆոլոգիական հասկացություն՝ տրված Ու. Մ. *Դևիսի* կողմից, XIX դարի վերջին: Ըստ Դեվիսի, ռելիեֆի բազմազան ձևերի առաջացումը պայմանավորված է երկրաբանական կառուցվածքի և արտաքին պրոցեսների փոխազդեցությամբ՝ որոշակի ժամանակաշրջանում: Այս վերջինն էլ նա անվանում է Ա. ց., որի ընթացքում սկզբնական բարձրադիր ռելիեֆն աստիճանաբար մասնատվում է, դենուդացիայի ենթարկվում և վերածվում *պենեպլենի*: Ա. ց-ի ընթացքում ռելիեֆի զարգացումն ապրում է «երիտասարդության», «հասունության» և «ծերության» փուլեր: Միայն երկրակեղևի նոր տեկտոնական բարձրացումները կարող են երիտասարդացնել ռելիեֆը և սկիզբ հանդիսանալ նոր Ա. ց-ի: